IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:*

Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ մասնաճյուղն իր 2016-2020թթ. զարգացման ռազմավարությամբ միտված է *դառնալու ուսանողակենտրոն միջավայր*, որակյալ կրթական ծառայությունների մատուցման համար **ստեղծելու** այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան ուսանողին առավելագույնս իրագործելու իր ուսումնառության նպատակը՝ ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, **բավարարելու** ուսանողների ներկա և հեռանկարային պահանջմունքները:

Մասնաճյուղը կրթության որակի ապահովման հարցում վարում է հստակ քաղաքականություն և նրա կրթական գործունեության գերակա նպատակը դա կրթական ծառայությունների որակից ուսանողների բավարարվածությունն է: Այն ենթադրում է ուսանողների կրթական կարիքների վերհանում, կրթական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի շարունակական բարձրացում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի ներկայացված է ***Հավելված 4.1***:

Ուսանողների թիվը		2015	2016	2017	2018	2019
Բակալավրի	առկա	523	666	646	630	553
	հեռակա	1004	1027	1039	950	880

Ուսումնառողների շարժունությունը վերջին 5 տարվա կտրվածքով ներկայացված է ***Հավելված 3.4.1***-ում:

Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	**2015-16**	**2016-17**	**2017-18**	**2018-19**	**2019-20**
1	Դուրս մնացածների թիվը/տոկոսը	**68** /4%	**66** /3,9%	**67** /4,3%	**69** /4,9%	**17** /1,3%
2	Վերականգնվածների թիվը/տոկոսը	**17** /1%	**22** /1,3%	**23** /1,5%	**31** /2,2%	**15** /1,2%

Մասնաճյուղի վարած քաղաքականությունը ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության ուղղությամբ ղեկավարվում է ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 7-րդ նպատակով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրությամբ (13/4):

Ուսանողների հավաքագրման գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով Ուսումնամեթոդական վարչության կազմում 2014թ. հունվարից մասնաճյուղում գործում է Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման (ՄԿՊԿ) բաժինը, որը 2020թ.-ի հունվարին վերակազմավորվել է որպես Մինչհամալսարանական կրթության և պրակտիկաների կազմակերպման բաժին:

Քանի որ մասնաճյուղի դիմորդների **90%-ից** ավելին կազմում են Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտները ***(ԳԱՅ 2014-2019, Յուցանիշ 1.3)*** ՄԿՊԿ բաժինը դիմորդների հավաքագրման ուղղությամբ նպատակային աշխատանքներ է իրականացնում մարզի դպրոցներում և նախապես մշակված ժամանակացույցով կազմակերպում հանդիպումներ, որոնց ժամանակ ներկայացնում են մասնաճյուղում իրականացվող կրթական ծառայությունների և մարզում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների մասին: Դպրոց-բուհ

համագործակցության շրջանակներում մասնաճյուղի դասախոսները դպրոցներում հանդես են գալիս ակնարկային դասախոսություններով և թեմատիկ քննարկումներով:

«Բաց դռների օրեր»-ի շրջանակում մարզի դպրոցների, վարժարանների, քոլեջների սաները պարբերաբար ճանաչողական այց են կատարում համալսարան, ծանոթանում մասնաճյուղի ուսումնառության պայմաններին, իրենց ցանկությամբ մասնակցում դասերի: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների բարձր դասարանի աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցում իրենց կարևոր դերակատարումն ունեն մասնաճյուղում անցկացվող ԵՊՀ ամենամյա օլիմպիադաները (*Հավելված 4.6*):

Դիմորդների հավաքագրման նպատակով մասնաճյուղը համագործակցության պայմանագրեր (էջ 2) ունի մարզի չորս միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ. օժանդակում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերամշակման աշխատանքներին, ցուցաբերում է մեթոդական և մասնագիտական օգնություն:

Դիմորդներ հավաքագրելու համար մասնաճյուղն իրականացնում է նաև ակտիվ զովազդային միջոցառումներ՝ տպագրվում են բուկլետներ, զովազդային պաստառներ, տեղադրվում է տեղեկատվություն ամենամյա տպագրվող «Հայաստանի բուհերի տեղեկատու»-ում, մասնաճյուղի գործունեությունը պարբերաբար լուսաբանվում է մասնաճյուղի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

ԵՊՀ ԻՄ ինտերնետային կայքէջում գործում է «Դիմորդ» բաժինը, որտեղ տեղադրվում են դիմորդներին ուղղորդող նյութեր. տվյալ ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների ցանկը, ընդունելության կարգը, պահանջվող փաստաթղթերը, ընդունելության արդյունքները:

ԵՊՀ ԻՄ դիմորդների հավաքագրման գործընթացին նպաստում է նաև ուսման վարձավճարների, ուսման վարձի մասնակի փոխհատուցման, ներբուհական կրթաթոշակների հատկացման մասնաճյուղի վարած քաղաքականությունը:

Ընդունելության գործընթացը մասնաճյուղն իրականացնում է միջնակարգ և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա մրցութային հիմունքներով՝ միասնական, կենտրոնացված և ներբուհական քննությունների միջոցով: Առկա ուսուցմամբ ընդունելությունը կազմակերպվում է տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի համաձայն՝ առաջնորդվելով ՀՀ կրթության մասին օրենքով և ՀՀ Կառավարության որոշումներով (26.04.2012թ. որոշում N597-Ն, 28.04.2011թ. որոշում N700-Ն՝ «**ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ**»): Գործընթացն ամբողջությամբ կազմակերպում և իրականացնում է ԵՊՀ ԻՄ ընդունող հանձնաժողովը՝ դիմորդների դիմում-հայտերի և փաստաթղթերի հիման վրա: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված ընդունելության մրցույթի արդյունքները մասնաճյուղը վավերացնում է հրամանագրման գործընթացով:

Հեռակա ուսուցմամբ մասնաճյուղն ընդունելությունն իրականացնում է համաձայն տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ԿԳՄՍ) նախարարի հրամանով հաստատված մասնագիտությունների ու հատկացվող տեղերի քանակի՝ առաջնորդվելով հեռակա ուսուցման ընդունելության կանոններով (ՀՀ ԿԳ նախարարի 19.07.2016թ. հրաման N743-Ն): Ընդունելության քննությունները ԵՊՀ ԻՄ ընդունող հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է ըստ սահմանված կանոնների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության վերահսկողությամբ: Իսկ գործընթացի

թափանցիկությունն ու արդարությունն ապահովվում են համապատասխան ընթացակարգային քայլերով:

Նշենք, որ դիմորդների թիվը 2017 և 2018 թվականներին նվազել էր դպրոցների շրջանավարտների թվի նվազման պատճառով (195, 103), իսկ 2019թ.-ին և 2020թ.-ին այն աճել է՝ համապատասխանաբար **220 և 251** դիմորդ: Կենտրոնացված ընդունելության ընդհանուր ծավալում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունվածների մասնաբաժինը վերջին հինգ տարիների համար տատանվել է **1.37%-2.03%-ի** միջակայքում (***ԳԱՅ 2014-19, ցուցանիշ 1.5):***

Ընդունելության գործընթացի արդյունավետությունը, դիմորդների թվի կայունությունը պայմանավորված է նաև տարածաշրջանում մասնաճյուղի ունեցած բարձր հեղինակությամբ: Այդ մասին են վկայում մասնաճյուղի կողմից տարբեր մեխանիզմներով պարբերաբար կատարվող ուսումնասիրությունները, որոնց արդյունքներով հարցվածների գերակշիռ մասը խորհուրդ կտա իր մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ:

Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ ԻՄ	**2015թ.**	**2016թ.**	**2017թ.**	**2018թ.**	**2019թ.**
Արտաքին շահակիցներ	94.6%	90.9%	95.6%		**99.3%** /էջ 7
Շրջանավարտներ		86.1%	90.4%	88.8%	**89.0%** /էջ 8

Հաշվի առնելով տարածաշրջանում առկա խնդիրները մասնաճյուղը պլանավորել է 2020թ.-ին հեռակա ուսուցմամբ իրականացնել նաև մագիստրոսական կրթական ծրագիր «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտությամբ:

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (ՄՄՈՒՀ) բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների (***08.07.2015, N752-Ն***) կրթությունը համապատասխան մասնագիտությամբ ԵՊՀ ԻՄ-ում շարունակելու համար ընդունելության գործընթացը կազմակերպում է ԵՊՀ ԻՄ ընդունող հանձնաժողովը՝ հավակնորդի ընտրությունը և հրամանագրումը իրականացնելով ըստ լիցենզիայով տրված սահմանային տեղերի թվի և ՀՀ Կառավարության 18.07.2015թ. N752–Ն որոշման: Գործող կարգին համապատասխան 2015-2019թթ. մասնաճյուղում իրենց կրթությունը շարունակել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 83 շրջանավարտներ (***Հավելված 4.2***):

Ուսանողների հեռացումներն ու վերականգնումներն իրականացվում են հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2018թ. դեկտեմբերի 17-ի N1676-Ն հրամանով հաստատված կարգը: 2015-2019թթ. ընթացքում համալսարանից ուսանողների հեռացման հիմնական պատճառներ են.

- ***ակադեմիական անբավարար առաջադիմությունը*** (**20.27%**). յուրաքանչյուր քննաշրջանից ու պարտքերի մարման 2 փուլերից հետո անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողը հեռացվում է ԵՊՀ ԻՄ-ից (**կետ 55**):
- ***ներքին կարգապահական կանոններին չհետևելը*** (**30.63%**). անհարգելի բացակայությունների պատճառով նկատողությունների արդյունքում «ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոններ»-ին (**կետ 62.4**) համապատասխան ուսանողը հեռացվում է մասնաճյուղից:
- ***անվճարունակությունը*** (**49.1%, կետ 62.5**), որը տարածաշրջանի սոցիալական խնդիրներից է և անդրադառնում է մասնաճյուղի ուսանողական համակազմի վրա: Համալսարանը խնդիրը փորձում է կարգավորել ոչ միայն ուսանողական նպաստներով, պետական և ներբուհական կրթաթոշակներով, այլև ըստ ամիսների վճարման հնարավորությամբ:

ԵՊՀ ԻՄ-ից ուսումնառողների հեռացման (ազատման) պատճառներից է նաև ուսանողների ՀՀ այլ բուհեր տեղափոխվելը, որը կարգավորվում է ՀՀ Կառավարության «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգ»-ով

(25.08.20112., №1240-Ն): Վերջին հինգ տարիների տվյալներով համալսարանում ուսանողների արտահոսքի հիմնական պատճառներն են եղել՝ ***ամուսնության և բնակության վայրի փոփոխությունը*** (87.5%), ***մասնագիտության փոփոխությունը*** (12.5%):

Մասնաճյուղում սովորողների ներհոսքը գերազանցում է արտահոսքին: Ներհոսքի համար պատճառներ են հանդիսացել. սոցիալական խնդիրները և բնակության վայրի փոփոխությունը (**29.20%),** ՀՀ այլ բուհերից ԵՊՀ ԻՄ տեղափոխությունը (**4,38%**), երկրորդ մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալը (**5.11**%), ՄՄՈՒՀ-ի շրջանավարտների՝ բարձրագույն մասնագիտական կրթության ստանալը (**61.31%**) (***Հավելված 3.4.1***):

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ մասնաճյուղի վարած քաղաքականությունն ամրագրված է նրա 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 5-րդ նպատակում և կրթության որակի ապահովման բնագավառում մասնաճյուղի քաղաքականության մեջ:

Մասնաճյուղում ուսանողների կրթական կարիքների վերհանման համար գործում են մի շարք մեխանիզմներ: Առաջին հերթին դա նրանց ընդգրկվածությունն է մասնաճյուղի կառավարման տարբեր գործընթացներում, մասնաճյուղի և ֆակուլտետների գիտական խորհուրդների կազմերում, մասնաճյուղի և ֆակուլտետների մանդատային հանձնաժողովներում (25%), որի շնորհիվ ուսանողների ձայնը լսելի է դառնում:

2009թ.-ից սկսած մասնաճյուղում ուսանողական տարբեր հարցումների միջոցով վեր են հանվում ուսանողների կրթական և ուսումնական կարիքները: Այդ հարցումներում ուսանողները ներկայացնում են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերում են մասնագիտական առարկաների, գործնական և սեմինար պարապմունքների ժամաքանակների ավելացմանը, գնահատման համակարգերին, մասնագիտական գրականության ավելացմանը, լաբորատորիաների սարքավորումներով հարստացմանը, պրակտիկայի անցկացման արդյունավետությանը և այլն: Բոլոր հարցումների արդյունքները քննարկվում են մասնագի-տական կրթության որակի ապահովման բաժնում և ուղղորդվում համապատասխան բաժիններ:

Օրինակ, 2017թ.-ի մասնաճյուղից բավարարվածության առցանց ուսանողական հարցման ժամանակ ուսանողներն առաջարկել էին ոչ մասնագիտական դասընթացներն ավարտել ստուգարքով (նշենք, որ 2018-19 ուստարուց ոչ մասնագիտական դասընթացներն ավարտվում են ստուգարքով):

Օրինակ, գրեթե բոլոր հարցումների ժամանակ ուսանողներն անդրադարձ են կատարում մասնաճյուղի գրադարանում առկա մասնագիտական գրականության քանակին (**էջ 3,4**)՝ հիմնականում արտահայտելով իրենց դժգոհությունը նրանց քչությունից և որակից: 2016-2020թթ. ընթացքում գրադարանը համալրվել է բազմաթիվ նոր գրքերով, դասախոսություններով ու մասնագիտական գրականության էլեկտրոնային պաշարներով, միայն 2018-19 ուստարում՝ 640 միավոր գրականությամբ:

Հարցումների արդյունքների և ուսանողների տարատեսակ առաջարկությունների հիման վրա գրեթե բոլոր ամբիոններում իրականացվել է գնահատման ձևերի վերանայում:

ՈՒՄՎ-ի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների մեջ ուսանողներն առաջարկում են ավելացնել սեմինար/գործնական դասընթացների ժամաքանակը (ՈՒՄՎ, Արձ.3, 30.03.2016թ), ինչը հնարավորություն է տալիս ավելի խորքային յուրացնել դասավանդվող առարկան, որի

արդյունքում ամբիոնները ուսումնական պլաններում կատարել են փոփոխություններ (Օրինակ, 2019-23թթ. «Պատմություն» ԿԾ ուսումնական պլանի քննարկում, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն, Արձ. 12, 26.04.2019):

Ուսանողական հարցման արդյունքում ուսանողները որպես խնդիր նշել են ընթացիկ քննությունների հետ դասերի համակցումը (ՈՒՄՎ, Արձ. 3, 30.03.2016թ), ուստի 2018թ.-ից սկսած ընթացիկ քննությունների համար առանձնացված 9-րդ և 15-րդ շաբաթներին ազատվում են դասերից համաձայն ԵՊՀ կողմից ընդունված համապատասխան կարգի (կետ 3.3.3):

Յուրաքանչյուր ամիս ուսանողական կառույցների (ՈՒԽ, ՈՒԳԸ) ներկայացուցիչները, կուրսերի ավագները, բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները հստակ մշակված ժամանակացույցով հանդիպում են մասնաճյուղի տնօրենի հետ՝ քննարկելու իրենց խնդիրներն ու առաջարկները, ներկայացնում են իրենց կարիքները, առաջարկում դրանց լուծման իրենց ձևերը և ակնկալում են մասնաճյուղի ղեկավարության աջակցությունը: Ուսանողների կրթական կարիքների վերհանումը Ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններից և նպատակներից է (2-րդ կետ): Ուսանողները ուսխորհրդին հիմնականում դիմում են բանավոր, վերհանված խնդիրները հնարավորության սահմաններում լուծվում են անմիջապես, հակառակ դեպքում՝ քննարկվում են ՈՒԽ-ի ընդլայնված նիստերում, ներկայացվում ֆակուլտետների և մասնաճյուղի գիտական խորհուրդների նիստերում: Մասնավորապես՝ Ուսումնամեթոդական վարչության կողմից իրականացված հարցումներում (ՈՒՄՎ, Արձ.3, 31.03.2017) ուսանողների արած առաջարկների հիման վրա առանձին առարկաների համար փոխվել են թեստերի կառուցվածքն ու բովանդակությունը, դասապրոցեսի ընթացքում սկսել են կիրառել նոր մեթոդներ, ավելացել են մասնագիտական առարկաների ժամաքանակները:

Ֆակուլտետներում ներդրված ուսումնական խորհրդատուների ինստիտուտը (3-րդ և 5-րդ կետեր) ուսանողների կրթական կարիքների արդյունավետ, օպերատիվ վերհանման հնարավորություններից է (**Չափորոշիչ 4.գ**): Ուսանողներն իրենց հուզող հարցերով կարող են դիմել նաև մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումներին (**Չափորոշիչ 4.դ**):

Դեռևս 2012թ.ից ֆակուլտետներում տեղադրված են «Արագ արձագանքման արկղեր»՝ ուսանողներին հուզող հարցերն ու խնդիրները հավաքելու համար: Սակայն, վերջին տարիներին ուսանողներն իրենց խնդիրների մասին ավելի շատ գրում են առցանց հարցումների ժամանակ, ազատ արտահայտվում և բարձրաձայնում են կառավարման մարմիններում, կամ տարբեր հանդիպումների ժամանակ:

Ուսանողներն իրենց կարիքների մասին կարող են հարցեր ուղղել մասնաճյուղի պաշտոնական կայքէջի **«Ուղղել հարց»** բաժնի միջոցով (2015-2020թթ. դիմել է 45 հոգի): Ստացված հարցերն ուղղորդվում են համապատասխան բաժիններ և պատասխանի հետ տեղադրվում կայքի "Հարց-պատասխան" բաժնում:

Ըստ ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են իրենց կրթական կարիքների վերհանումից և լուծումներից (միջ.գն՝ **4.28**, **էջ 2, կետ 4.3**) և գտնում են, որ մասնաճյուղում արդյունավետ են աշխատում ուսանողների դիմումներին և բողոքներին արձագանքելու ընթացակարգերը և մեխանիզմները (միջ.գն. վերջին 4 տարիների համար՝ **4.35, էջ 8**): Մասնաճյուղում, ընդհանուր առմամբ, կարիքների վերհանման գործընթացի արդյունավետությունը ապահովվում է վերհանման մեխանիզմների բազմազանությամբ և խնդիրներին արագ արձագանքմամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և

խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	**70.34%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	**35%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	**55.6%**
Արդյոք ուսումնառողներին հատկացվու՞մ են խորհրդատուներ:	այո

Մասնաճյուղում լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ գործունեությունն ամրագրված է ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (***ՌԾ, Խնդիր 6.1.,*** գործ. 1,2,3,9):

Ըստ «ԵՊՀ ԻՄ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ի (***10.06.2017թ.***) առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով կցվում են ուսումնական խորհրդա-տուներ՝ 30 ուսանողին մեկ խորհրդատու, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են: Մասնաճյուղում ուսումնական խորհրդատուների գործունեությունը կանոնակարգված է (***28.12.2013թ.***): Ուսումնական խորհրդատուն ուսանողներին ծանոթացնում է իրենց իրա-վունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին, ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն: Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ: ՈՒսումնական խորհրդատուների գործունեությունից ուսանողների բավարարվածությունը գնահատվում է ուսանողական տարբեր հարցումների միջոցով: «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից բավարարվածության ուսանողա-կան հարցման» վերջին 4 տարիների միջին արդյունքներով (***Հավելված 4.3***) ուսանողների **76,6%-ը** տեղեկացված է ուսումնական խորհրդատուի (կուրսղեկի) ծառայությունների մասին և հիմնականում բավարարված է նրանց աշխատանքներից (միջին գնահատականը՝ **4,47**):

Ուսումնառությանն աջակցող և խթանող մեխանիզմ է մասնաճյուղում գործող լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կայացած ծառայությունը: Ամբիոններն ուսումնառության ընթացքում դժվարությունների հանդիպող ուսանողների համար մասնագիտական դասընթացներից ըստ հաստատված ժամանակացույցերի կազմակերպում են լրացուցիչ խորհրդատվություններ : Դրանց կիսամյակային աշխատանքային պլան-ժամանակացույցերը տեղադրվում են մասնաճյուղի պաշտոնական կայքում՝ յուրաքանչյուր ֆակուլտետի «Խորհրդատվական ծառայություններ» բաժնում (ԲԳՖ, ՀԳՖ, ՏԳՖ, ԿԱՖ): Վերջին 5 տարիներին իրականացված մասնաճյուղից բավարավածության ուսանողական հարցման արդյունքներով (***Հավելված 4.3***) ուսանողները մասամբ բավարարված են լրացուցիչ խորհրդատվական ծառայություններից (**միջին միավորը 3.12-ից 3.99**), նրանց **58,9%**-ը տեղեկացված է դրանց մասին, սակայն միայն **1/3 մասն** է ընդգրկված այդ պարապմունքներում: Ուսանողների ընդգրկվածությունը և բավարավածությունը բարձրացնելու համար ֆակուլտետներում ստեղծվել են նաև մասնագիտական ակումբներ (Երիտասարդ ծրագրավորողների, ֆինանսիստների և այլն), որոնց գործունեությունն առայժմ շատ տեսանելի չէ:

Բարձր կուրսերում խորհրդատվական պարապմունքները ներառում են նաև կուրսային և ավարտական աշխատանքների ոլորտը: Յուրաքանչյուր ուսանողին կցվում է ամբիոնի մեկ

դասախոս: Խորհրդատու-դասախոսն օգնում է ուսանողին ճիշտ ընտրելու կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	

Մասնաճյուղի վարած քաղաքականությունը ուսանողներին լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու ուղղությամբ ամրագրված են մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 6-րդ նպատակում (***խնդիր 6.1,*** գործ. 5): Մինչ այժմ մասնաճյուղում ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմը կատարում էր ուսանողների ընդունելություն՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Գործընթացը կանոնակարգելու համար 2013թ. մասնաճյուղում մշակվել է վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ և նոր ժամանակացույց, որը վերանայվել է 2015թ-ին: Վարչական աշխատակազմին ուսանողները դիմում են նաև մասնաճյուղի պաշտոնական էլ.կայքի «Ուղղել հարց» բաժնի միջոցով (Չափորոշիչ 4.բ), միջնորդավորված՝ ուսումնական խորհրդատուի, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության միջոցով: Հրատապ հարցերի դեպքում ընդունելության ժամերից դուրս ևս ուսանողները կարող են դիմել ամբիոնի վարիչին, դեկանին, տնօրենին և այլն:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերջին 5 տարիների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները բավարարված են դեկանների և դեկանատների (էջ 6-8) տրամադրած օժանդակությունից և ուղղորդումից (***2017-18 ուստարում համապատասխանաբար 4.72, 4.64 միջ. գնահատականներ***):

Հաշվապահությանը ուսանողները դիմում են հիմնականում ուսման վարձի փոխանցման հետ կապված հարցերի դեպքում: Ուսանողների օժանդակության և ուղղորդման գործում կարևոր են նաև վարչական այլ աշխատակազմերի աջակցությունը: Յուրաքանչյուր բաժին իր իրավասության շրջանակներում օժանդակում է ուսանողին, կամ ուղղորդում համապատասխան ծառայությանը: ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության 2018-2019թթ. հարցման արդյունքներով (էջ 2,6) շրջանավարտները բավարարված են մասնաճյուղի ղեկավարությունից (**92.7%, միջին միավորը՝ 4.6**) և ֆակուլտետների ղեկավարությունից (**95.1%, միջին միավորը՝ 4.73**):

ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին (էջ 1,2)	**26%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից (էջ 1,2)	**5%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից (էջ 1,2)	**57.4%**

Ուսանողների ապագա կարիերային աջակցելը մասնաճյուղի ռազմավարական կարևոր խնդիրներից է (**ՌԾ 2016-2020թթ. Խնդիր 6.1, գործ. 6,7**): Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միջոցով մասնաճյուղը խթանում է ուսանողների կարիերայի ծառայությունները՝ նրանց համար կազմակերպելով լրացուցիչ պրակտիկաներ, խորհրդատվական և ուսուցողական դասընթացներ, նպաստում ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանը: 2017թ.-ից կենտրոնի

ամբողջ ծառայություններն իրականացնում է շրջանավարտների և արտա-քին շահակիցների հետ տարվող աշխատանքների համակարգողը (Արտաքին կապերի բաժին)։

Դեռևս 2014թ.-ից գործադրված է մասնաճյուղի շրջանավարտների **տվյալների բազա**, որում գրանցված են 2010-2019թթ. շրջանավարտների տվյալները և տեղեկատվություն նրանց զբաղվածության վերաբերյալ։ Այդ տվյալների միջոցով գործատուների հետ համագործակցու-թյան շրջանակներում թափուր աշխատատեղերի դեպքում շրջանավարտներն ուղղորդվում են համապատասխան մասնագիտական աշխատանքի։

Շրջանավարտների և գործատուների միջև կապերը ամրապնդելու և զարգացնելու համար մասնաճյուղը համագործակցում է մարզի մի շարք գործատու կազմակերպությունների հետ, այդ թվում ինքնակառավարման մարմիններ, հասարակական և բարեգործական կազմակերպու-թյուններ, հիմնադրամներ, զբոսաշրջային կազմակերպություններ և հյուրատներ, ընկերություններ, բանկեր և վարկային կամակերպություններ, կրթական հաստատություններ։

Մասնաճյուղի պաշտոնական կայքի «Շրջանավարտ» բաժինը ունի 5 ենթաբաժիններ։ 2019թ. ստեղծվել է «Հարցազրույցների շարք մեր շրջանավարտների հետ» ենթաբաժինը, որտեղ ներկայացվում են հարցազրույցներ մասնաճյուղի հաջողակ շրջանավարտների հետ։ «Շրջանավարտ» էջի միջոցով ուսանողներին և շրջանավարտներին տեղեկատվություն է տրամադրվում հատկապես մարզի տարբեր կազմակերպություններում թափուր աշխատա-տեղերի վերաբերյալ։ Նույն էջում պարբերաբար թարմացվում և համալրվում են խորհրդա-տվական նյութերը, միաժամանակ կենտրոնի համար նախատեսված ցուցատախտակում ներկայացվում են աշխատանք փնտրող շրջանավարտներին ուղղորդող նյութեր։ Գործատուների կողմից միայն 2018թ.-ին տրամադրվել է 50 թափուր հաստիքների մասին տեղեկատվություն (35 շրջանավարտ ձեռք է բերել աշխատանք)։ 2019թ. առկա ուսուցման 154 շրջանավարտներից 50-ը աշխատանքի է անցել հենց 1-ին տարում։ Կենտրոնն ունի իր ֆեյսբուքյան էջը։

Կենտրոնի նախաձեռնությամբ ուսանողների և շրջանավարտների համար 2018-19 ուս-տարում կազմակերպվել են առաջնորդության, նախագծերի կառավարման, մեդիագրագիտու-թյան, PR-ի և ֆոնդահայթայթման վերաբերյալ դասընթացներ, քննարկումներ։ 2018թ.-ից սկսած մասնաճյուղում ուսանողների և շրջանավարտների համար տարբեր ուղղություններով կազմակերպվել է 37 դասընթաց, իրականացվել է 56 փոխշահավետ հանդիպում արտաքին շահակիցների հետ։ Մասնաճյուղի ուսանողները և դասախոսներն ակտիվ մասնակցում են Իջևանում կազմակերպվող «**Աշխատանքի տոնավաճառ**» ծրագրերին (2019թ., 2018թ., 2015թ.)։

2012թ.-ից մինչ օրս «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» կազմակերպու-թյունը հովանավորում է մասնաճյուղի «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողներին, ովքեր դպրոցներում վարում են ֆրանսերեն լեզվի խմբակներ, կազմակերպում միջոցառումներ՝ նվիրված հայկական և ֆրանսիական տոներին։ Խաղաղության կորպուսի կամավորները մասնաճյուղում բոլոր ֆակուլտետների ուսանողների համար սահմանված ժամերին վարում են անգլերեն լեզվի դասեր, գործում է անգլերենի ռեսուրս կենտրոն, որում ներգրավված ուսանողները զարգացնում են խոսակցական անգլերենի իրենց հմտությունները։

2020թ. փետրվարին մասնաճյուղում բացվել է նաև «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն», որը կազմակերպում է կրթական, մշակութային և տեղեկատվական միջոցառումներ, տարբեր թեմաների շուրջ ուսումնական կարճատև դասընթացներ։

Վերջին տարիներին յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ իրականացնում է հանդիպումներ ավարտական կուրսերի ուսանողների հետ։ Միայն 2018թ.-ին տեղի են ունեցել հանդիպումներ

առկա ուսուցման 11 կրթական ծրագրերի շուրջ 158 ուսանողների և հեռակա ուսուցման 8 կրթական ծրագրերի շուրջ 224 ուսանողների հետ: Նման հանդիպումների նպատակը նրանց ապագա կարիերային և աշխատանքի տեղավորվելուն աջակցելն է:

Ֆակուլտետներում ևս, տարբեր կազմակերպությունների հետ համագործակցելով, կատարվում են ուսանողների կարիերային նպաստող աշխատանքներ՝ սեմինարների, դասընթացների, պրակտիկ աշխատանքների, ճանաչողական այցերի, հանդիպումների ձևով, որոնք նպաստում են նրանց մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողներն ակտիվ մասնակցում են տարածաշրջանի տարբեր կազմակերպություններում օտարալեզու հյուրերի հետ հանդիպումներին՝ կամավոր աշխատելով որպես **դիտորդներ և թարգմանիչներ**: Բացի այդ 2019 թվականին մասնաճյուղում անգլերեն լեզվով անցկացված «Առաջնորդություն» և «Ամերիկայի կրթությունը» թեմաներով դասընթացների ժամանակ, որոշ ուսանողներ իրականացրել են նաև սինխրոն թարգմանություններ:

2015թ.-ից տնտեսագիտության ֆակուլտետը ուսանողների պրակտիկ կարողությունների, հմտությունների զարգացման, միջազգային փորձ ունեցող մասնագետների հետ շփման նպատակով համագործակցում է «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման և հետազոտության» կենտրոնի, «Ապագա ռեզորթ» ՍՊԸ-ի հետ: Համագործակցության շրջանակներում «Սերվիս» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ուսանողները մասնակցում են սեմինարների, պրակտիկ աշխատանքների, անց են կացվում պրակտիկաներ ընտրված կազմակերպություն-ներում: «Իջևանի ՀՀԳ» ՍՊԸ հետ կնքված հուշագրի շնորհիվ տնտեսագիտության ֆակուլտետի 5 ուսանող հաշվապահական գրասենյակում անցել են լրացուցիչ մասնագիտական պրակտիկա և գրանցվել նրանց կադրային բազայում, 2 ուսանող ևս լրացուցիչ մասնագիտական պրակտիկա իրականացրել են ԵՊՀ ԻՄ-ի հաշվապահություն բաժնում: «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի կողմից կազմակերպված «հաշվետար» դասընթացին մասնակցել է մասնճյուղի 8 ուսանող, որից 6-ը հաղթահարելով սահմանված պահանջները ստացել են հավաստագրեր:

Բնական գիտությունների ֆակուլտետի ուսանողների համար կարևորագույն քայլերից է Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հետ կնքված պայմանագիրը՝ մարզում ՏՀՏ ոլորտի զարգացման, մասնավորապես ՏՏ ոլորտի մասնագիտական դասընթացների անցկացման համար: Ծրագրավորման “GG” և “Synergi International Systems” ընկերությունները մարզի տեխնոլոգիական կարողությունների զարգացման համար որպես հնարավոր ուղղություն դիտարկելով ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի շրջանավարտների և ուսանողների հիման վրա ծրագրավորողների տեղական թիմերի ձևավորումը՝ կազմակերպում են դասընթացներ և պլանավորում նրանց ապահովել աշխատանքի պատվերներով:

2019թ. կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողեների համար կազմակերվել են մի քանի լրացուցիչ դասընթացներ՝ հագուստի մոդելավորման, նկարչության և այլն: Օրինակ «Տավուշն աշխարհի աչքերով» միջազգային նկարչական սիմպոզիումի շրջանակներում Ուկրաինայից ժամանած հայ նկարչուհու կողմից իրականացվել են վարպետաց դասեր:

Տարածաշրջանի գործատուների **50%** մասնակցությունը մասնաճյուղի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերում հնարավորություն է տալիս ուսանողներին գերազանց դրսևորվելու դեպքում արժանանալ նրանց ուշադրությանը և աշխատանքի հրավեր ստանալ:

Շրջանավարտների կարիրային նպաստող ծառայությունների արդյունավետությունը գնահատվում է մասնաճյուղում 2013թ.-ից իրականացվող **«ԵՊՀ ԻՄ-ից բավարարվածության»**

ուսանողական հարցման միջոցով: Հարկ է նշել, որ վերջին տարիներին շրջանավարտների հետ տարվող աշխատանքները համակարգողների ակտիվ գործունեության շնորհիվ էապես բարձրացել է ուսանողների տեղեկացվածության և բավարարվածության մակարդակը: Մասնավորապես, ուսանողները բավարարված են դեկանատների և մասնագիտական ամբիոնների կողմից իրենց կարիերային նպաստող աշխատանքներից:

Շրջանավարտների և կարերայի կենտրոնի գործունեության մասին 2017-18 ուստարվա հարցման մասնակից ուսանողների տեղեկացվածությունը միջինից բավականին ցածր է՝ **26.06%**: Կենտրոնի աշխատանքներից ուսանողների տեղեկացվածության ընդհանուր ցածր ցուցանիշը պայմանավորված է կիրառական արվեստի և հումանիտար գիտությունների ֆակուլտետների ցածր ցուցանիշներով: Հարցման արդյունքները վկայում են, որ ցածր է նաև կենտրոնի ծառայություններից նրանց օգտվելու ցուցանիշը՝ **5,15%,** չնայած կարիերային նպաստող ֆակուլտետային աշխատանքներին ներգրավվածության ցուցանիշը համեմատաբար բարձր է (***Հավելված 4.4***): Ներկայացված արդյունքները վկայում են, որ մասնաճյուղն այս ուղղությամբ բավականին աշխատանքներ ունի կատարելու: Օրինակ, պլանավորվում է ստեղծել շրջանավարտների միություն, ակտիվացնել նախկին շրջանավարտների և բուհի միջև համագործակցությունը, ստեղծել պայմաններ իրենց կարիերայում հաջողությունների հասած շրջանավարտների կողմից մասնաճյուղին նյութական և ֆինանսական աջկցություն ցուցաբերելու և ծրագրերում ներառելու համար (***ՌԾ 2016-2020թթ., Խնդիր 6.1, գործ. 10***):

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:					
Ուսումնառողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը					
Ֆակուլտետ	***2016***	***2017***	***2018***	***2019***	***2020***
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	2		1	3	1
Տնտեսագիտության ֆակուլտետ	1	1	1	2	2
Բնական գիտությունների ֆակուլտետ	-	-	-	1	
Կիրառական արվեստի ֆակուլտետ (ցուցահանդեսներ)					
Ուսանող	10	12	10	10	3
աշխատանք	10	12	10	15	3

Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողներին ներգրավվելու մասնաճյուղի քաղաքականությունը ամրագրված է մասնաճյուղի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2-րդ նպատակում (**Խնդիր 2.1**), ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության և կրթության որակի ապահովման բնագավառում մասնաճյուղի քաղաքականության մեջ: ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան բարձրագույն կրթության բակալավրի որակավորման կրթական ծրագիրը կազմված է հիմնական, մասնագիտացված և կամընտրական դասընթացներից և չի նախատեսում գիտական հետազոտական աշխատանքների իրականացում: ԵՊՀ ԻՄ-ն հիմնականում իրականացնում է բակալավրական կրթություն և ուսանողների գիտահետազոտական աշխատանքները սահմանափակվում են անհատական կամ ղեկավարների հետ համատեղ գիտական զեկուցումների պատրաստումով, որոնցով հանդես են գալիս մասնաճյուղային, հանրապետական, երբեմն նաև միջազգային գիտաժողովներում, տպագրում են գիտական հոդվածներ: Այդ աշխատանքներին աջակցում է նաև Ուսանողական գիտական ընկերությունը (հիմք հաշվետվությունները): Հաշվի առնելով վերջին տարիներին ուսանողների տպագրված աշխատանքների և գիտաժողովների մասնակցության քանակի նվազման միտումը, 2019թ.

նոյեմբերի 18-ին մասնաճյուղում կազմակերպվել է «Ինչպես կատարել գիտահետազոտական աշխատանք» թեմայով սեմինար:

Մասնաճյուղն աջակցում է ուսանողների միջբուհական գիտաժողովների մասնակցելուն: 2019թ. փետրվարին ԵՊՀ ԻՄ-ի և ՌԴ Գժելի պետական համալսարանի աշխատակիցները կազմակերպել են տեսակոնֆերանս (մասնակցել է ԵՊՀ ԻՄ-ի 1 ուսանող): 2019թ. հոկտեմբերին մասնաճյուղում կազմակերպվել է «Անկախության առաջնեկը» խորագրով հանրապետական գիտաժողով՝ նվիրված ԵՊՀ ԻՄ-ի 25-ամյակին (մասնակցել է 15 ուսանող): 2018թ. ԵՊՀ ՈՒԳԸ հինգերորդ միջազգային ժողովին մասնակցել են ԵՊՀ ԻՄ-ի 5 ուսանող: 2018թ. մայիսին մասնաճյուղում կայացել է «1918թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության արարման գործընթացը» խորագրով հանրապետական գիտաժողովը՝ նվիրված Առաջին հանրապետության հիմնադրման 100-ամյակին (զեկուցումներով հանդես են եկել 12 ուսանող): 2017թ. փետրվարին մասնաճյուղում կայացել է «Երիտասարդության հիմնախնդիրները և պետության հզորացման միտումները» թեմայով ուսանողական հանրապետական գիտաժողովը, որտեղ զեկուցումով հանդես են եկել մասնաճյուղի 15 ուսանողներ: 2016թ. ապրիլին Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում մասնաճյուղի 10 ուսանողներ մասնակցել են ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված ուսանողական հանրապետական գիտաժողովին:

Մասնաճյուղի 1 ուսանող 2019թ. ճանաչվել է ԵՊՀ լավագույն ուսանող, իսկ 2019թ. դեկտեմբերին մասնաճյուղի մեկ ուսանող ԱՄԷ դեսպանատան կողմից ճանաչվել է SS ոլորտի լավագույն ուսանող:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:	
Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	**80%**
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	**45%**
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	**76%**

Մասնաճյուղի քաղաքականությունը ուսանողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ամրագրված է զարգացման ռազմավարական ծրագրի 6-րդ նպատակում: Ուսանողների իրավունքներն ու պարտականություններն ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոններում:

Ուսանողներն իրենց իրավունքներին և պարտականություններին տեղեկանում են ուսումնական խորհրդատուի ծառայություններից, ուսանողական կառույցներից, օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպան հանձնաժողովից, կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցից և դասընթացների տեղեկագրքից, մասնաճյուղի էլ. կայքից, հայտարարությունների տախտակից և այլն:

Ըստ մասնաճյուղի ուսանողների բողոքների քննարկման կարգի ուսանողները կարող են մասնաճյուղի մանդատային հանձնաժողովին ներկայացնել դիմում-բողոքներ պետական և ներբուհական կրթաթոշակների, ուսանողական նպաստների հատկացումների վերաբերյալ (կետ 5): Ըստ կարգի բողոքները քննարկվում են մասնաճյուղի մանդատային հանձնաժողովում և տրվում համապատասխան լուծումներ: Մինչ այժմ ֆակուլտետների և մասնաճյուղի մանդատային հանձնաժողովները դիմում-բողոքներ չեն ստացել, քանի որ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացումներն իրականացվում են ըստ կարգի, որի մասին ուսանողներն իրազեկում են ուսանողական խորհուրդի, խորհրդատուների, կայքի և այլնի միջոցով: Նույն կարգի համաձայն՝ ուսանողները կարող են բողոքարկել ամփոփիչ

ատեստավորման, բանավոր և գրավոր քննությունների արդյունքները (**կետ 2,3,4**): 2019թ. իրենց քննությունների արդյունքները բողոքարկած հումանիտար գիտությունների ֆակուլտետի 5 ուսանողներից երեքն ըստ բողոքարկման կարգի բարձրացրել են իրենց գնահատականները: Քննական արդյունքները բողոքարկել են 2015թ.-ին տնտեսագիտության ֆակուլտետի 1, 2017թ.-ին 2 ուսանողներ:

Ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող կառույցներից է Ուսանողական խորհուրդը՝ ուսանողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական և նրա ընկերային շահերը ներկայացնող ընտրովի մարմին, որում ընդգրկված են ուսանողների **11.9%-ը**: ԵՊՀ ԻՄ ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը (**հիմք նրանց տարեկան աշխատանքային պլանները և հաշվետվությունները**): Ուսանողական խորհրդի անդամները կառավարման մարմիններում ներկայացնում, արտահայտում և պաշտպանում են մասնաճյուղի ուսանողների շահերն ու իրավունքները, մասնակցում մասնաճյուղում ներքին կարգապահության պահպանմանը, կազմակերպում ուսանողական և երիտասարդական տոների անցկացում, աջակցում ուսանողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը: Ուսանողները պարբերաբար մասնակցում են ուսանողական խորհրդի և ֆակուլտետային ուսանողական խորհուրդների նիստերին և քննարկումների միջոցով, ըստ անհրաժեշտության նաև համապատասխան բաժինների օժանդակությամբ, նրանց խնդիրներին տրվում են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ: Ուսանողները ՈՒԽ-ին հիմնականում դիմում են բանավոր:

Մասնաճյուղում իրականացված ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարարվածության 2018-19 ուստարվա առցանց ուսանողական հարցման արդյունքներով Ուսանողական խորհրդի գործունեությունից ուսանողների բավարարվածությունը կազմել է **78%,** իսկ 2015-19թթ. արդյունքները, որոնք ներկայացված են ***Հավելված 4.5-ում,*** վկայում են մասնաճյուղում ուսանողական խորհրդի գործունեության ձևավորված մշակույթի մասին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման ուղղությամբ մասնաճյուղի քաղաքականությունն ամրագրված է մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրում (***Խնդիր 3.2, գործ. 1,2,3, 5-րդ և 6-րդ նպատակներ***), ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության մեջ և կրթության որակի ապահովման քնագավառում մասնաճյուղի քաղաքականության մեջ:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների որակի գնահատումը մասնաճյուղում իրականացվում է կայուն ներդրված մի շարք հարցումների միջոցով. «ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման», «ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման», ԵՊՀ ԻՄ-ից ներքին շահակիցների (ուսանողների, դասախո-սական, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմերի) բավարարվածության հարցման», «ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության» հարցումների միջոցով:

Հարցումների արդյունավետությունը ապահովելու նպատակով նույն ոլորտին վերաբերող հարցեր են ներառված տարբեր հարցաշարերում, որոնք հնարավորություն են տալիս ստուգել ստացված տեղեկատվության օբյեկտիվությունը: Հարցման արդյունքները մշակվում են և

վերլուծվում համապատասխան բաժիններում, քննարկվում համապատասխան կառուցվածքային միավորներում և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայքի «Որակի ապահովման գործընթացներ» էջում:

Հավելված 4.3-ում ներկայացված են վերջին 5 տարիների հարցումներից ստացած արդյունքները լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից և ուսումնական խորհրդատուների աշխատանքից ուսանողների տեղեկացվածության և բավարարվածության վերաբերյալ: Աղյուսակում բերված արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հիմնական մասը **(միջինը՝ 80%-ը)** տեղեկացված է ուսումնական խորհրդատուների մասին, ինչը վկայում է նրանց ակտիվ գործունեության, ուսանողների հետ մշտական հանդիպումների և բազմաթիվ հարցերում նրանց աջակցության մասին: Սակայն այդ թվերը վկայում են նաև, որ ուսումնական խորհրդատուների ինստիտուտը այնուամենայնիվ դեռ շատ խնդիրներ ունի, եթե կան ուսանողներ, որոնք տեղեկացված չեն նրանց գործունեությունից և չեն ընկալում խորհրդատուի կարևորությունը:

Մտահոգիչ է լրացուցիչ խորհրդատվական ծառայություններից ուսանողների քիչ տեղեկացվածությունը (միջինը՝ **60%**), թեպետ մասնակցողներն ընդհանուր առմամբ բավարարված են այդ պարապմունքներից (միջինը՝ **72%**): Ուղղակի պետք է փաստել, որ բավականին ցածր է ընդգրկվածությունը խորհրդատվական պարապմունքներում, ինչը նշանակում է, որ ամբիոններն այդ գործընթացին պատշաճ ուշադրություն չեն դարձնում կամ լիարժեք չեն կազմակերպում, կամ ուսանողները չեն պատկերացնում այդ գործընթացի էությունը: Պետք է նշել, որ ուսանողները բավարարված են վերջին տարիներին մասնաճյուղում ձևավորված և արդյունավետ գործող կրթական ծրագրի ղեկավարի ծառայություններից (**78%, 85%**):

Հարցումների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով հարցաթերթերը պարբերաբար վերանայվում են (հիմք ՄԿՈԱ բաժնի արձանագրությունները):

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):					
Զբաղվածություն/ուսման շարունակություն	*2015*	*2016*	*2017*	*2018*	*2019*
Ավարտելուց անմիջապես հետո	**11**	**13**	**17**	**37**	**49**
Նախքան ավարտելը					**25**
Մասնագիտությամբ	**26**	**17**	**21**	**32**	**40**
Ոչ մասնագիտությամբ	**54**	**55**	**33**	**75**	**90**
Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների %-ը		**15%**	**5%**	**3%**	**8%**
Գործազուրկ ուսանողների տոկոսը	**57%**	**98%**	**87%**	**60%**	**66%**

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Մասնաճյուղում ուսանողներին վերաբերող գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի առկայություն 2. ՄԿՊԿ բաժնի առկայություն 3. Պետական քոլեջների հետ պայմանագրերի առկայություն 4. Մասնագիտությունների պարբերաբար վերանայում 5. Հեռակա ուսուցման համակարգի առկայություն 6. Առկա և հեռակա ուսուցման համակարգերի համընկնող և տարբերվող մասնագիտությունների առկայություն 7. Որոշ մասնագիտությունների համար վճարովի համակարգում ընդունելության շեմի նվազեցում 8. Մասնաճյուղի մասնագիտությունների ցածր վարձավճարներ 9. Մասնաճյուղի կառավարման, գործունեության գնահատման և որակի ապահովման գործընթացներում առկա ուսուցման համակարգի	1. Համագործակցություն մարզի դպրոցների և պետական քոլեջների հետ 2. Այլ ՄՈՒՀ-երի հետ համագործակցություն, փորձի փոխանակում 3. ԵՊՀ միջազգային կապերի օգտագործում 4. Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի համագործակցություն գործատուների հետ

ուսանողների ներգրավվածություն 10.ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի ակտիվ գործունեություն և համագործակցու-թյուն այլ ՄՈՒՀ-երի հետ 11. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցերի և դասընթացների տեղեկագրքերի առկայություն 12.Բազմագործոն գնահատման համակարգի առկայություն 13.Մասնաճյուղի և կիրառական արվեստի ֆակուլտետի բուկլետների առկայություն 14.Ուսումնական խորհրդատուների ակտիվ գործունեություն 15.Կրթական ծրագրերի ղեկավարների ակտիվ գործունեություն 16.Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների բազմազանություն 17.Մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքի առկայություն 18.Ուսանողների տվյալների և առաջադիմության ավտոմատացված էլ. համակարգի՝ «Supervision YSU» առկայություն 19.ՄԿՈԱ բաժնի առկայություն 20. Հարցումների արդյունքների վերլուծությունների և վիճակագրա-կան տվյալների հավաքագրման և ամփոփման մեխանիզմների առկայություն 21. Պրակտիկաների իրականացման համար պայմանագրերի առկայություն	5. Ուսանողական կա-ռույցների համագործակ-ցություն Մայր բուհի և այլ ՄՈՒՀ-երի ՈՒԽ-երի և ՈՒԳԸ-երի հետ: 6. Տարածաշրջանում լուրջ մրցակից ՄՈՒՀ-երի բացակայություն 7. Շրջանավարտների միության ստեղծում
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**
1. Մասնաճյուղի կառավարման, գործունեության գնահատ-ման և որակի ապահովման գործընթացներում հեռակա ուսուցման համակարգի ուսանողների պակաս ներգրավ-վածություն 2. Գնահատման համակարգի վերանայման ընթացակարգի բացակայությունը 3. Ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի անկատարություն 4. Ուսանողների կողմից տարբեր խնդիրներով վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի անկատարություն 5. Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի պասիվ աշխատանք 6. Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների պասիվ ներգրավվածություն 7. Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների իրականացման արդյունավետության պակաս 8. Արտասահմանյան ՄՈՒՀ-երի հետ մասնաճյուղի թույլ համագործակցություն 9. Օտարերկրյա ուսանողների փոքր թիվ 10.Տարածաշրջանում գիտամշակութային միջավայրի պասիվություն	1. ՀՀ-ում դիմորդների թվի նվազում 2. Ուսման նկատմամբ շահագրգռվածության պակաս 3. ՀՀ-ում գնաճի բարձր մակարդակ 4. Ոչ պետական ՄՈՒՀ-երի հավատարմագրում և հնարավոր մրցակցություն մասնաճյուղի հետ 5. Աշխատաշուկայում մաս-նագիտությունների պահան-ջարկի անկանխատեսելի փոփոխություններ և գործա-զրկության բարձր մակարդակ 6. Ուսանողների որոշ մասի մոտ առկա անտարբերություն սեփական իրավունքների պաշտպանության գործընթացի նկատմամբ: